

Կարծիք

Արուսյակ Հենրիկի Իվանյանի «Տրանստերմինոլոգիայի դրսևորումը գործարար անգլերենում»

Ժ. 02.07 – «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Ժամանակակից գիտության մեջ մենք ականատես ենք լինում նախկինում առանձին գիտակարգերի միավորման գործընթացին: Այս առումով բացառություն չէ նաև տերմինաբանության բնագավառը, երբ տերմինների փոխակերպումների շնորհիվ առաջանում են նոր տերմինաբանական համակարգեր, որոնք իրենց լեզվաբանական բնութագրով տարբերվում են նախկին հաստատված համակարգերից: Այս գործընթացների արդյունքում լեզուներում ի հայտ են գալիս միջգիտակարգային տերմիններ կամ տրանստերմիններ, որոնք կիրառվում են մի քանի գիտական ոլորտներում, ինչպես նաև երբեմն դառնում են ի սկզբանե այլ գիտակարգերի համար ստեղծված տերմինների համանուններ: Այս նկատվող նոր լեզվական միջոցների և տերմինների տեղաշարժով ատենախոսը հիմնավորում է իր աշխատանքի արդիականությունը:

Անժխտելի է այն փաստը, որ տերմինների ճշգրիտ օգտագործման հարցը պետք է լինի առաջնային, քանի որ դրանով է նաև պայմանավորվում համապատասխան գիտելիքի ըմկալումը: Իր հետազոտության մեջ Արուսյակ Իվանյանը ուսումնասիրում է տրանստերմինոլոգիագիայի գործընթացի դրսևորումը գործարար անգլերենում՝ վերլուծելով լեզվական միավորների մեկ տերմինաբանական համակարգից մյուսին անցնելու ընթացքում տեղի ունեցող իմաստաբանական փոփոխությունների առանձնահատկությունները: Ատենախոսը պնդում է, որ գործարար անգլերենի բոլոր ճյուղերում առկա գործառույթների ուսումնասիրությունը թույլ կտա առավել հստակ պատկերացնել, թե որտեղից են առաջացել տրանստերմինները և ինչ կապ ունեն այդ ճյուղերը միմյանց հետ:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, գրականության ցանկից և հավելվածներից:

Ատենախոսության առաջին գլխում՝ «Գործարար անգլերենի տերմինաբանության բնորոշ գծերը» վերտառությամբ, ատենախոսը ներկայացնում է տերմինաբանության ընդհանուր նկարագիրը, գործարար անգլերենը՝ որպես սնտեսական խոսույթի մաս և նաև հասկացութային փոխաբերության առանձնահատկությունները գործարար տերմինաբանության մեջ:

Երկրորդ գլխում, որը վերնագրված է «Տրանստերմինոլոգիան՝ որպես լեզվական երենույթ», ներկայացվում են ներակա և արտակա տրանստերմինոլոգիայի դրսևորումները գործարար անգլերենում:

Ատենախոսության երրորդ գլուխը, որն ատենախոսը վերնագրել է «Տրանստերմինոլոգիայի ճանաչողական նկարագիրը», բաղկացած է երեք ենթագլուխներից, որոնցում հեղինակը ներկայացնում է կենդանական, գունային և բնագիտական տրանստերմինների իմաստաբանական և ծագումնաբանական առանձնահատկությունները:

Եզրակացության մեջ ներկայացված են հետազոտության արդյունքները և եզրահանգումները:

Հանրային պաշտպանության ներկայացված ատենախոսությունը միանգամայն ինքնուրույն ուսումնասիրություն է: Ատենախոսը լուսաբանել է թեմային առնչվող տեսական գրականությունը, կիրառել է անհարաժեշտ մեթոդաբանություն:

Այնուամենայնիվ, բնավ չցանկանալով նսեմացնել աշխատանքի արժեքն ու նշանակությունը, կցանկանալինք ներկայացնել մի քանի դիտարկումներ և առաջարկներ.

1. Ատենախոսության Ներածություն բաժնում ոլորտն ու առարկան ներկայացված են ընդամենը մեկ նախադասությամբ, ընդ որում ոլորտը ներկայացվում է որպես զուտ գործարար անգլերենի տերմինաբանություն լայն հասկացությամբ, իսկ առարկան ընդամենը մեկ բառով՝ տրանստերմինոլոգիա: Ցանկալի կլիներ, որպեսզի և՛ հետազոտության ոլորտը, և՛ առարկան ներկայացվեին առանձին և որոշակի մանրամասնությամբ:

2. Կրկին ատենախոսության Ներածությունը բաժնում ատենախոսը նշում է թեմայի գիտական հետազոտման աստիճանը, որը ներկայացնելիս հիշատակում է բացառապես ռուս լեզվաբանների աշխատանքները: Խնդրում ենք պարզաբանել արդյոք գոյություն չունեն արևմտյան լեզվաբանների հեղինակությամբ արժեքավոր աշխատություններ ուսումնասիրվող ոլորտի վերաբերյալ:

3. Ատենախոսության երրորդ՝ գործնական գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից, որոնցում ներկայացվում են համապատասխանաբար կենդանական, գունային և քիմիական տրանստերմինների իմաստաբանական և ծագումնաբանական նկարագրերը: Կարծում ենք, որ աշխատանքը ավելի շահեկան և համոզիչ կլիներ, եթե ատենախոսը չսահմանափակվեր միայն տրանստերմինների իմաստային և ծագումնաբանական բնութագրերի ներկայացմամբ, այլ նաև ներկայացներ ուսումնասիրվող լեզվական միավորները համապատասխան գործարար տեքստերից քաղված հատվածներում՝ կատարելով իմաստաբանական վերլուծություն կոնկրետ համատեքստի հիման վրա:

4. Ոչ լիովին հասկանալի են ատենախոսության Հավելվածներ բաժնում տեղ գտած աղյուսակները, որտեղ ներկայացված են տրանստերմինները՝ իրենց հայերեն համարժեքներով և կառուցվածքային բանաձևերով: Կարծում ենք, որ տրանստերմինների հայերեն համարժեքները կարող են տարակուսանք առաջացնել, ինչպես օրինակ *land shark* , *shark repellent* , *shark watcher* , որոնք թարգմանվել են որպես *գիշատչի վանիչ* կամ *covered bear*, որը թարգմանվել է որպես *ապահովված արջ* : Պարզ չէ նաև օրինակ *Այլ տրանստերմիններ* հատվածում տեղ գտած հետևյալ ստորը՝ *apple* - խնձոր-գոյական: Խնդրում ենք պարզաբանել այս բաժնում տեղ գտած սույն աղյուսակների նպատակը:

5. Եզրակացությունը բաժնում ատենախոսը նշում է, որ կենդանուն արտահայտող տրանստերմինները նաև բրենդային տերմիններ են, որոնք հաճախորդների մոտ առաջացնում են հետաքրքրություն: Խնդրում ենք ատենախոսին ներկայացնել մի քանի օրինակ:

Նշված կետերը չեն նսեմացնում ատենախոսության արժեքը, և Արուսյակ

Հենրիկի Իվանյանի «Տրանստերմինոլոգիայի դրսևորումը գործարար անգլերենում» ատենախոսությունը համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հոդվածներն ու սեղմագիրը արտացոլում են վերջինիս հիմնական բովանդակությունը: Ասվածը հիմք է տալիս ինձ միջնորդել գիտական աստիճան շնորհող մասնագիտական խորհրդի առջև Արուսյակ Հենրիկի Իվանյանին շնորհելու հայցվող աստիճանը Ժ. 02.07. – (Ռումանագերմանական լեզուներ) մասնագիտության գծով:

Ք. Մ. Հարությունյան

բ.գ.թ. դոցենտ

Հաստատում եմ բ.գ.թ. դոցենտ

Ք. Մ. Հարությունյանի ստորագրությունը

ԵՊՀ գիտքարտուղար Մ. Հովհաննիսյան



15.05.24թ.